

ԾՐԱԳԻՐ

«ԱՐՑԱԽՈՒՄ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Արցախի Հանրապետության բնակչության համար հասանելի դարձնել անգլերեն լեզվի գիտելիքների ձեռքբերումը՝ այսպիսով նպաստելով Արցախում ընդհանուր կրթական մակարդակի զարգացմանը: Ծրագրի շրջանակներում, պետական մարմինների հետ համագործակցությամբ, անգլերենի դասընթացներ են կազմակերպվելու պետական ծառայողների համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ), 55 Արևելք, 59-րդ փող. Նյու Յորք, NY 10022-1112:
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40, ՀՎՀՀ 00006479):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արցախի Հանրապետություն, քաղ. Ստեփանակերտ, կրթական:
6.	Ծրագրի բյուջեն	34 238 295 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Արցախի Հանրապետության բնակչություն:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022թ. հունիսի 15-ից մինչև դեկտեմբերի 30-ը:

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադրամին (ՀՎՀՀ 01511187) պատվիրել անգլերեն լեզվի որակյալ արտադասարանական դասընթացներ՝ դարձնելով դրանք հասանելի Արցախի Հանրապետությունում, կազմակերպել, այդ թվում առցանց, անվճար, առնվազն 6 մակարդակով անգլերեն լեզվի դասընթացներ 16 տարին լրացած Արցախի Հանրապետության այն քաղաքացիների համար, ովքեր կցանկանան խորացնել իրենց անգլերեն լեզվի գիտելիքները Հայաստանի ամերիկյան համալսարանի «Շարունակական Կրթություն» ծրագրով: Նախատեսվում է մինչև ծրագրի ավարտը ունենալ 45 խումբ: Դասընթացները սկսելու են 2022թ. հունիսի 15-ին: Ծրագրի վեջնաժամկետն է 2022 թ. դեկտեմբերի 30-ը: Դասընթացների ընդհանուր բյուջեն կազմում է 34 238 295 (երեսունչորս միլիոն երկու հարյուր երեսունույթ հազար երկու հարյուր ինսունհինգ) դրամ՝ առանց ԱԱՀ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	- Անգլերեն լեզվի դասընթացների կազմակերպում, խմբերի հավաքագրում և անցկացում առնվազն 6 մակարդակում՝ 45 խմբի համար, յուրաքանչյուր խմբում՝ 10-12 մասնակից: Յուրաքանչյուր դասընթացի արժեքը կազմում է 760 851 (յոթ հարյուր վաթսուհազար ութ հարյուր հիսունմեկ) դրամ՝ առանց ԱԱՀ: Դասընթացների ընդհանուր բյուջեն կազմում է 34 238 295 (երեսունչորս միլիոն երկու հարյուր երեսունույթ հազար երկու հարյուր ինսունհինգ) դրամ՝ առանց ԱԱՀ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման համար լրացուցիչ կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ մարմինների հետ	Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, Արցախի Հանրապետության սոցիալական հարցերի և միգրացիայի նախարարություն:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀԲԸՄ կողմից մշակված ծրագրի արդյունավետության գնահատման գործիքակազմի կիրառում:

		Ֆինանսական և նկարագրային հաշվետվություններ են ներկայացվում Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչությանը: ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:
--	--	--

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ